# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6
# N ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-28
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «19» .02. 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Հարությունյանի, (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 31.07.2025թ-ին կնքված ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-28 ծածկագրով գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր), 7.5 և 7.14 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-28 ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված 295 740 000 (երկու հարյուր իննսունհինգ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, գումարից հաստատել 49 290 000 (քառասունինը միլիոն երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն գումարը, որի վճարումը Գնորդի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող վճարման ժամանակացույցով՝ համաձայն Հավելված 1-ի: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Պայմանագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ՝ միայն 2026 թվականի հունվար ամսվա համար:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ներքին գործերի նախարարություն | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011042471 | Հ/Հ 2500010488760100 |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ 01254973 |
| Հեռ. 010 59-60-21 | Հեռ. 091 40 40 73 |
| Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am | Էլ. Հասցեն՝ eychgroup@gmail.com, khv_84@mail.ru |
| ______ Ա. Ֆիդանյան / ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար / (ստորագրություն) Կ.Տ | Կ. Հարությունյան ______ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված N 1
« 31 » 07.2025թ.
կնքված ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-28 ծածկագրով
գնման պայմանագրի
«19» 02.2026թ. կնքված թիվ 6 համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 72261100/5 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ | - | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 | 49 290 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-60-21
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am
Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973
Հեռ. 091 40 40 73
Էլ. Հասցեն՝ eychgroup@gmail.com, khv_84@mail.ru

Կ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.